

**ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԻՈԼԵՏԱ ՎԻԿՏՈՐԻ**

**«ԲՆԱԿԱՆ ՄԱՐԴԸ» ԴԵՅՎԻԴ ՀԵՐԲԵՐՏ ԼՈՈՒՐԵՆՍԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ**

**Ժ. 01.07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2017**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՏԻԳՐԱՆ ՍԵՐԺԻԿԻ ՍԻՄՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈՔԻ ԶԻՎԱՆՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՐԻՆԵ ՀՐԱԶԻԿԻ ԳՈՒԼԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Հայ-ռուսական /սլավոնական/ համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. դեկտեմբերի 22-ին՝ ժամը 12:30, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15, 0002:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. նոյեմբերի 22-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու



Սիրանուշ Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարասկզբի անգլիացի գրող Դ.Հ. Լոուրենսի (1885–1930) արձակի ուսումնասիրությանը, մասնավորապես՝ արձակում «բնական մարդու» բացահայտմանը: Վերլուծությունը կատարվում է Լոուրենսի պատմվածքների և գրողի առաջ քաշած անգիտակցականի տեսության հիման վրա, որը նա անվանել է «արյան գիտակցություն»:

19-20-րդ դդ. գրականությանը բնորոշ է զարգացման բարդ գործընթացը, որում արտացոլվում են հետզհետե սրվող և վատթարացող սոցիալական և դասակարգային հակասությունները: 1914-1918 թթ. պատերազմը մեծ ազդեցություն է գործում անգլիացի գրողների աշխարհընկալման վրա: Պատմական իրադարձությունները փոխում են գրականության բովանդակությունը, բացում գործունեության նոր ասպարեզներ, ի հայտ են գալիս դրամատիկ բախումներ: Սկսվում է նոր ժանրերի և ոճական կադապրների հետազոտման և բացահայտման ինտենսիվ գործընթաց: Մարդկությունը մուտք է գործում սոցիալական և գիտատեխնոլոգիական հեղափոխությունների դար: Արյան և չարչարանքների մեջ ծնվում է նոր աշխարհ, նոր մարդ, նոր գիտակցություն: Հին աշխարհը կործանվում, ոչնչանում էր՝ իր ավերակների մեջ թողնելով նախկին համոզմունքները, իդեալները, կանոնները:

Համաշխարհային պատերազմով պայմանավորված ցնցումն իր ազդեցությունն է ունենում Լոուրենսի աշխարհընկալման վրա: Պատերազմը և հետպատերազմյան իրավիճակը նրա աշխարհընկալման մեջ այնպիսի տպավորություն են առաջացնում, թե քաղաքակրթությունը ճգնաժամ է ապրում և այնպիսի կանխազգացում, թե մարդկությունը կործանվում է<sup>1</sup>:

Անգլիայում պատերազմի ավարտից անմիջապես հետո Դ.Հ. Լոուրենսը մեծ ճանաչում է ձեռքբերում գրական աշխարհում և մտավորական հասարակության մեջ: Նա արդեն իսկ սկսել էր ստեղծագործել պատերազմից երեք տարի առաջ: Անգլիացի գրողն այդ «աշխարհում» ուշադրություն է գրավում՝ բարձրաձայնելով մարդու էության, նրա ցանկությունների մասին: Եվ եթե «կորուսյալ սերնդի» համար աշխարհայացքային հիմք էր հանդիսանում իդեալիստական փիլիսոփայությունը, և առաջին հերթին՝ Բերգսոնի փիլիսոփայությունը, ապա «մասնավոր աշխարհի» գրողների համար գրական ճանապարհ էին բացում Լոուրենսի ստեղծագործությունները: Նա օրինակ դարձավ 20-րդ դարի գրողներից շատերի համար<sup>2</sup>:

<sup>1</sup> Barlow A., *The Great War in British Literature*, Cambridge: Cambridge University Press, 2000, p. 13.

<sup>2</sup> Bergson H. and *British Modernism* (Edited by Gillies M.), Montreal, Quebec: McGill Queen's University Press, 1959, p. 21.

Լոուրենսն իր վրա մեծ ուշադրություն է գրավում անգլիական «տեխնոլոգիական քաղաքակրթության» նկատմամբ իր բացասական վերաբերմունքով: Այդ քաղաքակրթությունից հեռանալու համար նա մարդկանց առաջարկում է հույսը դնել անգիտակցականի վրա: Ժամանակակից քաղաքակրթությանը գրողը հակադրում է զգացմունքների ազատությունը և կիրքը: Լոուրենսը երազում է մարդկության փրկության մասին և առաջարկում է մարդուն բնական, նախասկզբնական արմատներին վերադառնալու իր ուտոպիստական ծրագիրը<sup>3</sup>:

Լոուրենսը ձգտում է իր ստեղծագործություններում ցույց տալ, որ մարդու էությունը գեղեցկանում է, երբ սկսում է ապրել ինտուիտիվ: Այս ձգտումով նա տարբերվում է Ջոյսից և Վուլֆից, քանի որ նրանք չէին հավատում մարդու էության կատարելագործմանը: Լոուրենսը կարևորում է մարդու էությունը, նրա հնարավորությունները և փորձում է ուղիներ գտնել նրա վերածննդի համար: Իր որոնումներում նա բացառում է մտքի, գիտակցության միջամտությունը և չափազանցում է մարդու կենսաբանական սկզբի ազդեցությունը մարդկանց կյանքում: Մարդու էության կատարելագործումը, նրա պատկերացմամբ, հնարավոր է սիրո, կրքի, բնազդների միջոցով:

### **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը լույս է սփռում Դ.Հ. Լոուրենսի «արյան գիտակցության» տեսության վրա, ինչի հիման վրա Լոուրենսի պատմվածքներում բացահայտվում են «բնական մարդու» գրողի պատկերացումները՝ միմյանցից հստակ տարանջատելով բնական և հասարակական գիտակցությունները: Եվ քանի որ պատմության տարբեր ժամանակաշրջաններում անհատի դերը, նրա ցանկությունը, կիրքը ճնշվում է հասարակության կողմից, և մարդը կորցնում է իր անհատականությունը, իր Ես-ը, նման թեմաները մշտապես արդիական են, որովհետև բացահայտվում են սեփական Ես-ը ճանաչելու, սեփական ցանկություններին հետևելու մեխանիզմները: Ասվածի վառ օրինակներից է «արյան գիտակցությամբ» առաջնորդվելը:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սույն ատենախոսության ուսումնասիրության առարկան է Դ.Հ. Լոուրենսի պատմվածքներում «բնական մարդու» քննությունը:

---

<sup>3</sup> Worthen J., D.H. Lawrence: The Early Years 1885-1912, The Cambridge Biography of D.H. Lawrence Vol. 1, Cambridge: Cambridge University Press, 1992, p. 445.

Աշխատանքի նպատակն է ներկայացնել Լոուրենսի «արյան գիտակցություն» տեսությունը և «բնական մարդ» հասկացությունը:

Ուսումնասիրությունը նպատակ ունի ցույց տալ գիտակցականի և անգիտակցականի, բնազդի և բանականության միջև ընթացող պայքարը Լոուրենսի կերտած հերոսների կյանքում, թե ինչի կարող է հանգեցնել, եթե մարդը ընտրի գիտակցական կյանքով ապրելը՝ անտեսելով անգիտակցականը, թե որ գրողներն ու ստեղծագործություններն են ազդեցություն ունեցել Լոուրենսի պատմվածքներում «բնական մարդ» հասկացության առաջացման հարցում: Փորձ է արվում նաև ցույց տալ, թե ինչպես են տիեզերական մասնիկները, մասնավորապես՝ արևն ու լուսինը, ազդում Լոուրենսի արձակում մարդու ֆիզիկականի և ներաշխարհի վրա՝ նրան հասարակական էակից դարձնելով «բնական մարդ», ինչը «արյան գիտակցություն» տեսության առանցքային մասն է:

Աշխատանքում վերլուծվում են նաև Դ.Հ. Լոուրենսի առաջնային (գրական) տեքստերը, ներկայացվում Լոուրենսի նշյալ տեսության վերաբերյալ իր էսսեներում արտահայտված մտքերը, մեկնաբանվում է դրանց իմաստը:

Կերպարային համակարգի քննությունը հնարավորություն է տալիս հասկանալ, թե Լոուրենսն ինչպես է իր ստեղծագործություններում «բնական մարդուն» հակադրելով հասարակական էակին՝ ստեղծում բնազդներով, կրքով, ցանկությամբ առաջնորդվող կերպարներ, որոնք ընդվզում են նյութապաշտ հասարակության դեմ՝ բնական կենսակերպ վարելու համար:

Լոուրենսի հասարակություն/զույգ/անհատ մոդելի միջոցով ցույց է տրվում, որ գրողը փորձում է հավասարակշռություն պահպանել անհատական և հասարակական գիտակցությունների միջև իր պատմվածքների հերոսների կյանքում՝ իր մոդելում ներառելով զույգ հասկացությունը, ինչն իր համար սեռական բնազդն արտահայտելու կարևորագույն պայման է:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում ընկած են գիտության մեջ լայն տարածում գտած ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: Աշխատանքը կառուցված է ավանդական տրամաբանությամբ: Փաստական (առաջնային) նյութը քննելիս օգտագործել ենք պատմահամեմատական մոտեցումը:

Աշխատանքում ներկայացվում է անգիտակցականի մասին Դ.Հ. Լոուրենսի տեսությունը: Քանի որ անգիտակցականի մասին առաջին տեսությունը պատկանում է Ֆրոյդի գրչին, ուստի փորձել ենք հասկանալ Դ.Հ. Լոուրենսի անգիտակցականի և Ջ. Ֆրոյդի անգիտակցականի վերաբերյալ տեսությունների միջև կապը, դրանց տարբերությունները, ինչպես նաև առանձնահատկությունները: Փորձել ենք վերլուծել Լոուրենսի տեսության և

գրական տեքստերի կապը, այսինքն՝ պարզել, թե տեսությունն ինչպես է դրսևորվում իր գեղարվեստական երկերում:

### **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Աշխատանքի նորույթն այն է, որ առաջին անգամ հայ գրականագիտության մեջ ուսումնասիրվում է անգիտակցականի մասին Լոուրենսի տեսությունը, որը նա անվանել է «արյան գիտակցություն», ինչի շնորհիվ իր պատմվածքներում բացահայտվում է գրողի հիացմունքը «բնական մարդկանց» կենսակերպի նկատմամբ, որոնք առաջնորդվում են տիեզերական գիտակցությամբ, բնական ազդակներով, ինտուիցիայով

### **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության նյութերն ու արդյունքները կարող են կիրառվել ինչպես բուհական դասընթացների, դասախոսությունների ժամանակ, այնպես էլ հիմք դառնալ 20-րդ դարասկզբի անգլիական գրականության հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև Լոուրենսի «արյան գիտակցության» տեսության վերաբերյալ պատկերացում կազմելու համար: Բացի այդ՝ կարող է պիտանի լինել հասարակական գիտություններով զբաղվողների համար:

### **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

Աշխատանքը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնը: Ատենախոսության հիմնադրույթները զեկուցվել են Երևանի Վ.Բրյուսովի անվ. պետ. լեզվաբանական համալսարանի «Գրականության արդի հիմնախնդիրներ» (Երևան, 2015) գիտաժողովում, հրատարակվել ՀՀ ԲՈՀ-ի կողմից կանոնադրությամբ հաստատված գիտական ամսագրերում:

### **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ**

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը 162 էջ է:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ամփոփ ներկայացված է այն ժամանակաշրջանը, որում ստեղծագործել է Դ.Հ. Լոուրենսը, մասնավորապես՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական այն իրադարձությունները, որոնք մեծապես ազդել են գրողի մտածելակերպի, ինչպես նաև գործունեության վրա՝ հետագայում արտացոլվելով իր ստեղծագործություններում: Հիմնավորված են ընտրված թեմայի արդիականությունը, շարադրված են աստենախոսության նպատակներն ու խնդիրները, ընդգծված է գիտական նորույթը:

### ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

#### Դ.Հ. ԼՈՒՐԵՆՍԻ «ԱՐՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

«Արյան գիտակցություն» հասկացությունը բնորոշվում է որպես Լոուրենսի առաջ քաշած անգիտակցականի տեսություն: Մինչև 1920-1921 թթ. «արյան գիտակցություն» եզրույթի ծագման մասին որևէ գրավոր վկայություն չի պահպանվել: Միայն այս տարիներին է Լոուրենսը «Հոգեվերլուծություն և անգիտակցական և Անգիտակցականի երևակայություն»<sup>4</sup> էսսեներում գրում այդ մասին: «Արյան գիտակցություն» եզրույթը վերցվել է «Անգիտակցականի երևակայությունը» («Fantasia of the Unconscious») գլխից, սակայն չենք կարող միանշանակորեն պնդել, թե «արյան» վերաբերյալ Լոուրենսի պատկերացումները ի հայտ են եկել միայն վաղ 20-ականներին: Եթե 1915 թ. Ռասելին ուղղված նրա նամակը արժանահավատ է, ապա «արյան գիտակցության»՝ որպես փիլիսոփայության հիմքի ձևավորման սկիզբը համընկնում է մոտավորապես 1905 թ., երբ նա դեռ 20 տարեկան էր<sup>5</sup>:

Այսպես, Բերթրան Ռասելին ուղղված նամակում Լոուրենսը շարադրում է «արյան գիտակցության» վերաբերյալ իր մտքերը, որտեղ հանգամանորեն նկարագրում է, թե ինչ է «արյան գիտակցությունը»՝ բացատրելով, որ գոյություն ունի մեկ այլ գիտակցություն, որն անկախ է ուղեղի համակարգից, սակայն մարդկանց կյանքի ողբերգությունն այն է, որ միտքը իշխում է «արյան գիտակցությանը»<sup>6</sup>: Ի պատասխան Լոուրենսի նամակի՝ Ռասելը գրում է, որ նա շեղվել է իրական ճանապարհից և դատապարտում է նրա խորհրդավոր,

<sup>4</sup> Lawrence D., *Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconsciousness*, London: Heinemann Ltd., 1923, p. 205.

<sup>5</sup> Lawrence D., *The Letters*, Volume II, June 1913 – October 1916 (Edited by Zytaruk G., etc.), Cambridge: Cambridge University Press, 1981, p. 470.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 470:

միստիկ տեսությունն «արյան» վերաբերյալ՝ այն մեկ բառով անվանելով «աղբ»<sup>7</sup>: «Սուրբ Մավր» («St. Mawr», 1925) վիպակը ընթերցողին է ներկայացնում Լոուրենսի՝ գիտակցության և «արյան գիտակցության» հակադրությունը: Լու Վիթթի ամուսինը՝ Ռիկոն, և երեցը գիտակցական կյանքի կողմնակից են, մինչդեռ Սուրբ Մավր անունով ձին՝ իր երկու ձիապաններով՝ Լևիսով և Ֆենիքսով, այլ աշխարհ են ներկայացնում: Աշխարհ, որը զերծ է մարդկային գաղափարախոսությունից: Լուին բնազդաբար զգում է, որ Մավրի աշխարհը լի է «առեղծվածային կյանքով»<sup>8</sup>: Նրան թվում է՝ լսում է այլ, ավելի մութ, ավելի վտանգավոր, ավելի ընդարձակ աշխարհից եկող ձայներ, և ցանկանում է գնալ այդ աշխարհ<sup>9</sup>: Նրան տեսիլք է գալիս, իբր սեփական աշխարհի պատերը հանկարծակի փշրվում են՝ թողնելով իրեն մթության մեջ<sup>10</sup>:

Այս պատմվածքում Լոուրենսն իր «տիեզերական գիտակցությամբ», որը ներառում է տիեզերքում գտնվող բոլոր տարրերը, այդ թվում՝ կենդանիներին, երկու տարբեր իրականություն է ներկայացնում: Կենդանու և մարդու միջև եղած հակադրությունը նկարագրվում է որպես երկու աշխարհների միջև տեղի ունեցող պատերազմ<sup>11</sup>: Լուի ամուսին Ռիկոն այն մարդկանցից է, որը տարված է հասարակական սովորույթներով և գաղափարներով: Ռիկոն չափազանց «եսակենտրոն» է<sup>12</sup>: Նա ամբողջովին ապրում է սեփական աշխարհում և անկարող է պատկերացնել մեկ այլ աշխարհ, որտեղ մարդիկ չեն իշխում ձիուն<sup>13</sup>: Երկու ձիապանները առաջնորդվում են «արյան գիտակցությամբ» և ինչպես Սուրբ Մավրն է մնում իր տերերի վերահսկողության տակ, այնպես էլ իրենք՝ տերերը, հաստատուն են և անկոտրում՝ ճանաչելով իրենց շրջապատող աշխարհը բնազդաբար՝ առանց մտածելու դրա մասին: Նրանք իրենց ողջ էությանբ զգում են, որ Լոնդոնի իրականությունը պատրանքի կամ բանտի է նման, որ քաղաքակրթությունը խոչընդոտում է բնական կյանքի ընթացքը: Այս պատմվածքի հիմնական նպատակն է ցույց տալ, որ «բնական մարդն», իր ինտուիցիային հետևելով, ավելի հզոր է, քան ուսցիոնալ բանականությունը՝ իրականությունը ճանաչելու գործում<sup>14</sup>:

---

<sup>7</sup>LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, p. 83.

<sup>8</sup>Lawrence D., St. Mawr and Other Stories, Cambridge: Cambridge University Press, 1983, p. 36.

<sup>9</sup>Նույն տեղում, էջ 50:

<sup>10</sup>Նույն տեղում, էջ 36:

<sup>11</sup>Նույն տեղում, էջ 42:

<sup>12</sup>Նույն տեղում, էջ 40:

<sup>13</sup>Նույն տեղում, էջ 42:

<sup>14</sup>Նույն տեղում, էջ 36:

1913 թ. հունվարին Էրնեստ Քոլլինգսին ուղղված նամակում Լոուրենսը գրում է. «Իմ կրոնը իմ հավատքն է «արյան» մեջ, քանի որ վերջինս ավելի իմաստուն է, քան բանականությունը»<sup>15</sup>:

«Արյան» կամ «արյան գիտակցության» վերաբերյալ իր պատկերացումները հեղինակը մանրամասն շարադրում է «Հոգեվերլուծություն և անգիտակցական» («Psychoanalysis and the Unconscious», 1921) և «Անգիտակցականի երևակայություն» («Fantasia of the Unconscious», 1922) աշխատություններում: Վերջինս «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության շարունակությունն է: Այս երկու աշխատություններում Լոուրենսը հորդորում է ընթերցողներին, որպեսզի ճանաչեն «արյան գիտակցությունը» որպես անգիտակցականի իր տեսություն, որը, ըստ նրա, հակադրվում է Զիգմունդ Ֆրոյդի անգիտակցականի տեսությանը:

«Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության մեջ Լոուրենսը հիշում է, թե ինչպես էին ինքն ու իր ժամանակակիցները անհամբեր, միևնույն ժամանակ, վախի զգացումով հետևում Ֆրոյդին, որը դեռ նոր էր «ուղևորվել» վտանգավոր ճամփորդության՝ դեպի մարդու գիտակցություն: Եվ Լոուրենսը անտարբեր չի մնում, երբ Ֆրոյդը գիտակցական աշխարհից հանկարծ քայլ է կատարում դեպի անգիտակցականը, որն իր ժամանակակիցների համար մինչ այդ ոչինչ էր, և հանկարծ այդ անգիտակցականը այլևս ոչինչ չէ<sup>16</sup>:

Լոուրենսի «արյան գիտակցության» տեսությունը ձևավորվել է Ջեյմս Ֆրազերի «Ոսկե ճյուղը» («The Golden Bough», 1890) և «Տոտեմիզմ և Էքզոգամիա» («Totemism and Exogamy», 1910) գրքերը կարդալուց հետո: Միանշանակ է Ֆրազերի «մարդաբանական և խորհրդավոր» ուսումնասիրությունների ազդեցությունը «արյան գիտակցության» ձևավորման վրա: Ինչպես Լոուրենսը, այնպես էլ մի շարք հայտնի մոդեռնիստ գրողներ պատերազմը կործանարար ուժ էին համարում և հույսի մի շող էին փնտրում այլընտրանքային հավատքների միջոցով<sup>17</sup>:

Նիցշեն Լոուրենսի համար թերևս ամենաազդեցիկ փիլիսոփան էր՝ միտք-մարմին կաղապարի տեսանկյունից: Ըստ Նիցշեի՝ մարդը չի կարող ճանաչել իրականությունը գիտակցության կամ բանականության միջոցով: Դա հնարավոր է միայն ազդակների շնորհիվ՝ անմիջական մարմնի և մեծ ցանկության շնորհիվ: Բնազդը և ցանկությունն են դրդում մարդուն ապրելու, այլ ոչ թե հոգին կամ

---

<sup>15</sup> Lawrence D., The Letters, Volume I, September 1901 – May 1913 (Edited by Boulton J.), Cambridge: Cambridge University Press, 1979, p. 503.

<sup>16</sup> Lawrence D., Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious, Chapter I, Psychoanalysis vs. Morality, Heinemann: London, 1931, p. 199.

<sup>17</sup> Marcus P., A Healed Whole Man: Frazer, Lawrence and Blood-Consciousness (Edited by Frazer R., Frazer J., etc.), London: MacMillan, 1990, pp. 232-252.

բանականությունը: Ըստ նրա՝ այն ամենը, ինչ լավ է, բնազդային է, իսկ այն ամենը, ինչ վատ է և սխալ, կապ չունի բնազդի հետ<sup>18</sup>:

Լոուրենսը տարանջատում է մարմինը մտքից, նույն կերպ՝ «արյունը» բառից, քանի որ «արյունը» մարմինն է, իսկ գիտակցությունը՝ խոսքը: Հետաքրքիր է այն փաստը, որ Լոուրենսն իր տեսությունն անվանել է «արյան գիտակցություն», քանի որ հակադրում է «արյունը» մտքին, գիտակցությանը, բանականությանը: Հարց է առաջանում, թե ինչու Լոուրենսն իր տեսությունը չի անվանել «արյան անգիտակցություն»: Սա թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Լոուրենսը գիտակցում էր՝ գիտակցությունը անհրաժեշտ է ապրելու, գոյությունը և «արյան» կարևորությունը պահպանելու համար:

Այսպիսով, «արյան գիտակցությունը» Լոուրենսի մտածողության գլխավոր մասն է կազմում, և փոքր արձակում նա ձգտում է իր հերոսների մեջ այդ գիտակցությունն արթնացնել՝ կենտրոնանալով իրենց մարմնի վրա: Սակայն շեշտը դրվում է ոչ թե հերոսների սեռական օրգանների վրա, այլ այն բանի, թե ինչ կարող է լինել, երբ բնազդները սկսեն իշխել մարդու գիտակցությանը:

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ**  
**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ Դ.Հ.**  
**ԼՈՈՒՐԵՆՍԻ 1925-30 ԹԹ. ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Անհատ/զույգ/հասարակություն մոդելով Լոուրենսն իր պատմվածքներում մի կողմից փորձում է հեռացնել իր հերոսներին հասարակությունից, որպեսզի նրանք կարողանան ազատվել վերջինիս ճնշող ազդեցությունից, ձեռք բերել ազատություն, վայելել կյանքը՝ կենտրոնանալով միայն իրենց բնազդների, բնական կարիքների վրա, մյուս կողմից, մինչև հասարակության մի մասնիկը դառնալը, այդ հերոսները փորձում են գտնել իրենց զույգին, որպեսզի կենսահաղորդակցության՝ սեռական բնազդը, կարողանա բնականորեն և ազատորեն դրսևորվել:

Այսպիսով, ըստ այս մոդելի, զույգը գտնվում է անհատի և հասարակության միջև: Անհատին բնորոշ հատկանիշներ ձեռք բերելու համար մարդը պետք է ձևավորի անհատական գիտակցություն, իսկ հասարակական գիտակցությունը, ըստ Լոուրենսի, հատուկ է այն մարդկանց, որոնք հասարակության անբաժանելի մասն են: Անհատական և հասարակական գիտակցությունների միջև տարբերությունները Լոուրենսը մանրամասնորեն

---

<sup>18</sup>Nietzsche F., A Nietzsche Reader (Selected and translated by Hollingdale R.), Middlesex: Penguin books Ltd., 1983, p. 113.

ընթերցողին է ներկայացնում «Անհատական գիտակցություն/հասարակական գիտակցություն» էսսեում (1936)<sup>19</sup>:

Լոուրենսը համոզված էր, որ հասարակության բացասական ազդեցության հետևանքով է, որ մարդը չի կարողանում ինքն իրեն լիովին ճանաչել և ազատ ապրել: Նա «Ժողովրդավարություն» (1936) էսսեում գրում է, որ խելացի մարդը, հանուն իր հոգու ազատության, պետք է պայքարի ընդդեմ մեխանիզմների և նյութապաշտության<sup>20</sup>:

«Լեդի Չաթըրլիի սիրեկանի վերաբերյալ» էսսեում Լոուրենսը ցույց է տալիս իր արհամարհանքը ժամանակակից մարդկանց «նյարդային, խղճուկ» սիրո նկատմամբ և գովերգում է կրքոտ կենսահաղորդակցությունը, որը կենսունակ կապ է հաստատում տղամարդու և կնոջ միջև<sup>21</sup>: Նրա կարծիքով, ինտիմ հարաբերություն ունենալու և մարմինն այս դիտանկյունից ճանաչելու վախն արդեն դարձել է ահագնացող հիվանդություն արևմտյան մշակույթներում. «Մենք զսպում ենք մեր բնազդները՝ փակելով բոլոր դռները բնազդային իրազեկվածության առջև, այսպիսով՝ աշխարհի առջև: Այժմ մարդիկ միմյանց ճանաչում են որպես հասարակական կամ քաղաքական սուբյեկտներ, որոնք սառն են և ոչ հուզական: Բնազդային տեսանկյունից մեռած ենք մեկս մյուսիս նկատմամբ, մեր զգացմունքները սառչել են»<sup>22</sup>:

Լոուրենսի հերոսները միշտ փորձել են հասարակությունից փախչելով ազատություն ձեռք բերել: Այս գաղափարը կարելի է հանդիպել նրա՝ «Տղամարդը, որը սիրում էր կղզիները» («The Man Who Loved Islands», 1928), «Արև» («Sun», 1928) «Կինը, որը հեռացավ» («The Woman Who Rode Away», 1928), «Տղամարդը, որը մահացավ» («The Man Who Died», 1929) պատմվածքներում:

«Մարդը, որը մահացավ» պատմվածքը ևս ազատություն ձեռք բերելու մասին է: Այն ի սկզբանե անվանվել է «Փախչող աքաղաղ» («The Escaped Cock», 1929), ինչը միանգամից ընթերցողի ուշադրությունը սևեռում է փախուստի և ոչ թե մահվան գաղափարի վրա: Այս պատմվածքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը նվիրված է գյուղացու և աքաղաղի նկարագրությանը: Աքաղաղն ամուր կապված էր, որպեսզի չփախչի, սակայն, ի վերջո, թռչնին հաջողվում է ազատվել և փախչել<sup>23</sup>: Լոուրենսը ցանկանում էր, որ մարդիկ աքաղաղի նման

---

<sup>19</sup> Lawrence D., The Individual Consciousness V. The Social Consciousness, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by McDonald E.), New York: The Viking Press, 1968, p. 761.

<sup>20</sup> Lawrence D., Democracy, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: Viking, 1970, p. 716:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 353:

<sup>22</sup> Lawrence D., Study of Thomas Hardy (Edited by Davies J.), London: Heinemann Educational, 1973, p. 130.

<sup>23</sup> Lawrence D., The Man Who Died, London: Dodo Press, 2008, p. 4.

ազատվեն կապանքներից: Գյուղացու կերպարով նա նկարագրում է ժամանակակից հասարակությունը, իսկ աքաղաղը խորհրդանշում է անհատին, որն անազատության մեջ է<sup>24</sup>:

Պետք է նշել, որ Լոուրենսի՝ հասարակությունից հեռանալու և հասարակության անբաժանելի մասնիկը դառնալու այս գաղափարները բազմիցս քննադատության են արժանացել, քանի որ մի կողմից նա ընթերցողին կոչ է անում միանալ հասարակությանը, ինչի մասին հանգամանալից գրում է «Մարդու կրթություն» («Education of the People», 1936) էսսեում, մյուս կողմից պնդում է, որ «բնական մարդը» հասարակությունից հեռանալու կարիք ունի, քանի որ միայն այսպես նա կկարողանա ապրել բնազդներով: Այնուամենայնիվ, Լոուրենսը հստակորեն բացատրում է անհատականության և միասնության իր երկակի ըմբռնումը: Նրա կարծիքով, թեև մարդը ամենից առաջ անհատ է, սակայն նրա անհատականությունը կարևորվում և դրսևորվում է միայն հասարակական կյանքում. «Կյանքը բաղկացած է ընկերների, հարևանների, բարեկամների հետ շփումից, համագործակցությունից և միմյանց սիրելուց»<sup>25</sup>

Այսպիսով, Լոուրենսն անհատական և հասարակական գիտակցությունները հստակորեն տարանջատելով փորձել է իր արձակում ցույց տալ, որ անհատական գիտակցության ժամանակ մարդը սկսում է ճանաչել իր անձը, իր ցանկությունները, որոնցից ամենակարևորը, ըստ հեղինակի, կենսահաղորդակցության ցանկությունն է, իսկ հասարակական գիտակցությունը բնորոշ է այն մարդկանց, որոնք իրենց կյանքը չեն պատկերացնում առանց հասարակական կարծիքի և արհեստական կանոնների: Գիտակցելով, որ թե՛ մարդկանցից ամբողջովին մեկուսանալը և թե՛ հասարակության անբաժանելի մասնիկը լինելը կարող են բացասաբար անդրադառնալ մարդու վրա, Լոուրենսն այլընտրանք է առաջարկում, ըստ որի՝ յուրաքանչյուր մարդ պետք է գտնի իր զուգընկերոջը՝ թողնելով, որ բնական ազդակներն ու ցանկություններն ազատորեն դրսևորվեն:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՄԱՐԴՈՒ ԵՎ ՏԻԵՋԵՐՔԻ ԿԱՊԻ ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄԸ Դ.Հ. ԼՈՈՒՐԵՆՍԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԷՍՍԵՆԵՐՈՒՄ

20-րդ դարասկզբին բրիտանացի արձակագիրներից միայն Դ.Հ. Լոուրենսը ժառանգեց Թոմաս Հարդիի գաղափարների զգալի մասը, ուստի վերջինիս կարելի է համարել գրողի «հոգևոր հայրը»: Լոուրենսի ստեղծագործություններն ուղղակիորեն կրում են Հարդիի՝ կին-տղամարդ

---

<sup>24</sup>Նույն տեղում, էջ 5:

<sup>25</sup> Lawrence D., The Posthumous Papers, Education of the People (Edited with an Introduction by McDonald E.), London: William Heinemann Ltd., 1936, pp. 613-614.

հարաբերությունների և տիեզերական տարրերի նկարագրությունների ազդեցությունը<sup>26</sup>:

Մարդու կյանքի և տիեզերքի անքակտելիությունը ակնհայտորեն երևում է Լոուրենսի փոքր արձակում, հատկապես՝ «Արև», «Մրմունջ» և «Ձատիկ» պատմվածքներում:

Տիեզերական երևույթների, մասնավորապես՝ արևի և լուսնի մասին ունեցած գիտելիքը Լոուրենսը վերցրել է առանձին ժողովուրդների առասպելաբանությունից, որոնք և արտացոլվել են իր պատմվածքներում:

Տարբեր մշակույթներում արևը, ջերմության և լույսի խորհրդանիշը լինելուց բացի, նաև բնութագրվում է արական սեռի հատկանիշներով<sup>27</sup>:

Լոուրենսի կարծիքով արևը ոչ միայն իր հայրն է, այլև ժողովրդավարության, ազատության, ուժի, պարկեշտության և մեծահոգության խորհրդանիշը: Այն հաճախ զուգորդվում է ամբողջականությանը, փառքին և ճշմարտությանը: Լոուրենսը հպարտանում է ինքն իրենով՝ համարելով իրեն «մարդ-արև»։ «Ինձ զգում եմ, ինչպես մի ազնվական, երբ արևի ճառագայթը անցնում է մարմնիս միջով»<sup>28</sup>: Նա ցանկանում էր, որ մարդիկ ավելի ազնվական դառնան՝ ավելի մոտ լինելով արևին: Նրա կարծիքով ազնվական մարդուն կարելի է հակադրել «մահացած մարդուն»՝ նյութապաշտին: Լոուրենսը քննադատում է միջին դասի մարդկանց սահմանափակ մտածելակերպը, որոնք շատ հեռու են արևից, փոխարենը ունեն մի չափանիշ կյանքում՝ փողը: Նա գրում է, որ միջին բուրժուական խավը թղթադրամների գերին է և անտեսում է իրական երջանկության աղբյուրը: Նա երագում էր, որ մարդիկ ավելի լավ ճանաչեն արևը: Արևի մասին իրազեկվածությունը նրա կյանքի սկզբունքն էր. «Նա, ով մերժում է արևին ավելի մոտ լինելը, մերժում է նաև կյանքը և անբարոյական է»<sup>29</sup>:

Լոուրենսի՝ արևի նկատմամբ վերաբերմունքը հրաշալիորեն դրսևորվում է «Արև» պատմվածքում, որտեղ նա գրում է, թե ինչպիսի ազդեցություն է ունենում արևը մարդու մարմնի և մտքերի վրա: Այս պատմվածքում հստակորեն արտացոլվում է Լոուրենսի՝ արդյունաբերական, ժամանակակից հասարակությունից փախչելու և արևին ավելի մոտ լինելու գաղափարը: Հիվանդ կինը սկզբում այնքան էլ չէր հավատում բժշկի այն խորհրդին, որ բուժվելու համար իրեն արև է հարկավոր: Լոուրենսի ընկալմամբ արևը կյանքի աղբյուր է,

---

<sup>26</sup> Langbaum R., Lawrence and Hardy (Edited by Meyers J., etc.), London: The Athlone Press, 1985, p. 71.

<sup>27</sup> McKenzie M., Michael and Prime, Richard and George, Lisa and Dunning, Mythologies of the World: the Illustrated Guide to Mythological Beliefs and Customs, New York: Checkmark Books, 2001, p. 34.

<sup>28</sup> Lawrence D., The Complete Poems (Edited by Pinto V., etc.), London: Penguin Books, 1993, p. 525.

<sup>29</sup>Նույն տեղում, էջ 526-527:

որը կարող է ջերմացնել մարդկանց սրտերը, բուժել նրանց հիվանդությունները: Ուշագրավ է այն տեսարանը, որ ընթերցողի առջև է բացվում. «Նա նստեց և կտրծքն ուղղեց արևին՝ նույնիսկ այդ պահին ցավից հոգոց հանելով, որ ստիպված է տառապելով հանձնվել Արևին»<sup>30</sup>:

Քաղաքակրթությունից դժվարությամբ հեռացած կինը հետագայում այնքան է կապվում արևին, որ չի պատկերացնում իր կյանքն առանց դրա: Եվ երբ ամուսինը գալիս է քաղաքից, նա հայտնում է, որ չի կարող գնալ նրա հետ, չի կարող դավաճանել արևին<sup>31</sup>:

Լոուրենսի մտածողության տիեզերական ասպեկտը նրան կապում է Յունգի հետ, ում հետաքրքրում էր աստղաբանությունը, քանի որ դրա միջոցով նա կարողանում էր բացահայտել մարդու ներաշխարհը<sup>32</sup>: 1913 թ. խզելով իր կապը Ֆրոյդի հետ՝ Յունգը առաջ քաշեց արքետիպեր եզրույթը (psychology of archetypes), որով տարանջատեց անհատական և կոլեկտիվ անգիտակցականները: Անհատական անգիտակցականը ներառում է հիշողությունը, անձնական փորձառությունը, իսկ հավաքական անգիտակցականը համընդհանուր է, ոչ հոգեբանական և բաղկացած է սիմվոլներից և պատկերներից: Արքետիպերը անգիտակցական մակարդակում ձևավորվում են դարերի ընթացքում: Սիմվոլներն արքետիպերի մի տեսակ են<sup>33</sup>:

Լոուրենսը շարունակում է գրել «Ապոկալիպսիսում». «Հիմա իմ արտահայտած մտքերը գուցե անհեթեթ թվան ժամանակակից մարդկանց, քանի որ նրանք հիմար են: Ներքին կապ գոյություն ունի մեր մարմնի և արևի միջև, ինչպես նաև ներքին կապ կա մեր նյարդային համակարգի և լուսնի միջև»<sup>34</sup>:

Լոուրենսի ստեղծագործություններում բազմաթիվ են մարդու գիտակցության վրա լուսնի ազդեցության վերաբերյալ տեսարանները: Լուսինը, ըստ նրա, սուկ մեռած արբանյակ չէ, որն արտացոլում է արևի լույսը, ինչպես հավաստիացնում են գիտնականները: Այն կարող է մարդուն հասցնել մտահափշտակության աստիճանի, երջանկացնել նրան: Լոուրենսի կարծիքով, լուսնի լույսը մեծ նշանակություն ունի սիրային հարաբերությունների համար: Երբ զույգերը լուսնկա գիշերը միասին զբոսնում են, նրանք ամբողջովին զգում են լուսնի ուժը և կորցնում են տեղի, ժամանակի զգացողությունը, կտրվում են իրականությունից, և բանականությունը տեղի է տալիս զգացմունքներին:

---

<sup>30</sup> Լոուրենս Դ., Թարգմանություններ, Արև (թրգմ.՝ Լյուսիլա Հովհաննիսյան) // Աստղիկ 24, Սահակ Պարթև հրատ., 2013-2014, էջ 98:

<sup>31</sup> Լույն տեղում, էջ 109:

<sup>32</sup> Knox J., Archetype, Attachment, Analysis, Jungian Psychology and the Emergent Mind, Brunner-Routledge: New York, 2003, p. 11.

<sup>33</sup> Լույն տեղում, էջ 39:

<sup>34</sup> Lawrence D., Apocalypse and the Writings on Revelation (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 77.

Հակառակ դեպքում, երբ գիտակցությունն արթնանում է, այն բոլորովին բացասական ազդեցություն է ունենում այդ հարաբերության վրա և դառնում է ճակատագրական<sup>35</sup>:

«Մրմունջ» պատմվածքը սկսում է լուսնկա գիշերվա գեղեցիկ և խորհրդավոր նկարագրությամբ: Հեղինակը այս փոքրիկ պատմվածքում համեմատության և փոխաբերության միջոցով, ինչպես նաև սիմվոլների կիրառմամբ ստեղծում է անկրկնելի, գողտրիկ պատկերներ, տեսարաններ, բացահայտվում է նրա ողջ աշխարհընկալումը:

Լոուրենսի արտառոց զգայունությունը լիալուսնի առեղծվածային ուժի նկատմամբ անդրադարձել է ոչ միայն իր ստեղծագործությունների, այլև իր կյանքի վրա: Ջեսսի Չեմբերսը մտաբերում է այն պահերը, երբ Լոուրենսը հուսահատության գիրկն էր ընկնում լիալուսնի ժամանակ, նրա պահվածքը դառնում էր տարօրինակ: Մի անգամ՝ լիալուսնից առաջ, երբ նրանք զբոսնում էին լողափին, Ջեսսին նկատում է, թե ինչպես մի մուգ ուժ աստիճանաբար տիրում է Լոուրենսին, և երբ վերջապես այդ գեղեցիկ լիալուսինը հայտնվում է նրանց գլխավերևում, թվում է, թե ինչ-որ մի բան պայթում է Լոուրենսի ներսում. նրա բառերը դառնում են վայրի, սառը և կարծես ամբողջովին կորցնում է իրականության զգացումը: Մեկ ուրիշ անգամ, լուսնկա մի գիշեր, Լոուրենսը վախեցնում է Ջեսսին իր ոչ մարդկային վարքագծով, և մի պահ Ջեսսին երկմտում է, թե արդյո՞ք իր առջև կանգնած Լոուրենսը մարդկային էակ է<sup>36</sup>:

Դուկտոր Լեոնարդ Ջ. Ռավիթզը լուսնային ազդեցության մասին իր աշխատությունում գրում է, որ լիալուսինը ազդում է հատկապես այն մարդկանց վրա, որոնք ունեն մտավոր խանգարումներ կամ արտասովոր զգայուն են<sup>37</sup>: Չիկագոյի համալսարանի դոկտոր Վիլյամ Փեթերսոնն էլ նշում է, որ լիալուսինը հզոր ազդեցություն ունի այն մարդկանց վրա, որոնք հիվանդ են պալարախտով: Հիվանդությունը սրվում է լիալուսնից յոթ կամ տասնմեկ օր առաջ, որը հաճախ ավարտվում է մահով<sup>38</sup>: Լոուրենսն իր ողջ կյանքում տառապել է պալարախտով և պայքարել դրա դեմ, ինչը նույնպես պատճառ է դարձել, որ նա այդքան զգայուն լինի լիալուսնի նկատմամբ: Նա քաջ գիտակցում էր, թե ինչպիսի ներգործություն ունի լուսինը իր մարմնի վրա: Գրողը գիտեր, թե ինչ են զգում մարդիկ, երբ լիալուսնի ազդեցության տակ են ընկնում:

Այսպիսով, Դ.Հ. Լոուրենսի պատմվածքներում արտացոլված են տարբեր ժողովուրդների առասպելաբանությունները արևի, լուսնի մասին, որոնց

<sup>35</sup>LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, p. 30.

<sup>36</sup>Lawrence D., A Personal Record (Edited by J. D. Chambers), London: Frank Cass & Co. Ltd. Publishers, 1965, pp. 127-128.

<sup>37</sup>LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, p. 31.

<sup>38</sup>Նույն տեղում, էջ 31:

ազդեցությունը մարդու էության վրա ակնհայտորեն պատկերված է «Արև» և «Մրմունջ» պատմվածքներում: Այս պատմվածքներում նա իր հերոսներին օժտում է այնպիսի հատկանիշներով, որոնք հատուկ են «բնական մարդկանց», որոնց համար բնազդներով առաջնորդվելն առաջնային է կյանքում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունում փաստարկները քննարկելուց հետո հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ✓ «Արյան գիտակցությունը» Դ.Հ. Լուրենսի տեսությունն է, որի հիման վրա գրողն իր պատմվածքներում փորձում է կերտել «բնական մարկանց»: Ըստ այս տեսության՝ մարդու գիտակցությունից բացի, գոյություն ունի ուղեղի համակարգից լիովին անկախ մեկ այլ գիտակցություն: Վերոնշյալ տեսության մասին գրողն առաջին անգամ գրում է «Հոգեվերլուծություն և անգիտակցական» և «Անգիտակցականի երևակայություն» էսսեներում, որտեղ ընթերցողի համար հիմնավորում է, որ «արյան գիտակցությամբ» առաջնորդվելը մարդուն ազատություն է պարգևում: Գրողի ստեղծագործություններում իր հերոսների համար «արյան գիտակցությամբ» առաջնորդվել նշանակում է հետևել բնազդներին, ցանկություններին, ինտուիցիային, որոնք ճնշվում են սոցիալական նորմերի, քրիստոնեական արժեքաբանության կողմից:
- ✓ Լուրենսի պատմվածքներում «բնական մարդ» հասկացության ձևավորմանը նպաստել են Հեգելի, Շոպենհաուերի, Դարվինի, Սպենսերի, Հաբսլիի գիտական տեսակետները, Քարլենթերի գաղափարները, մասնավորապես՝ «նոր երկինք և երկիր» ստեղծելու նախագիծը, որոնց ելակետն այն էր, որ մարդը պետք է տրվի իր ցանկություններին և զգացմունքներին: Բացի այդ՝ «արյան գիտակցություն» տեսության համար հիմք են դարձել Ֆրազերի «Ոսկե ճյուղը», «Տոտեմիզմ» և «Էքսոգամիա» գրքերը: Ֆրազերի մարդաբանական և խորհրդավոր ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել Լուրենսի տեսության վրա: Նիցշեի «միտք-մարմին» տեսությունը նույնպես նպաստել է Լուրենսի «արյան գիտակցության» տեսության ձևավորմանը:
- ✓ Անգիտակցականի մասին Լուրենսի «արյան գիտակցության» տեսությունը, որի հիման վրա գրողն իր արձակում կերտել է «բնական մարդկանց», մեծամասամբ հիմնված է Զ. Ֆրոյդի՝ անգիտակցականի մասին գաղափարների վրա: Սակայն Լուրենսի համար անգիտակցականը գիտակցության սահմաններից դուրս է, ի տարբերություն Ֆրոյդի, որն անգիտակցականը չի առանձնացնում գիտակցականից, այլ դրա անբաժանելի մասն է համարում: Լուրենսը տարանջատում է միտքը, բանականությունը, գիտակցությունը բնազդից, «արյան գիտակցությունից», իսկ Ֆրոյդը միտքը բաժանում է երկու մասի՝ գիտակից մտքի և անգիտակից

մտքի: Վերջինս ներառում է այն բոլոր մտավոր գործընթացները, որոնցից մարդն անտեղյակ է: Լուրբենսը բացատրում է միտքը: Մտքում կատարվող բոլոր գործընթացները, ըստ նրա, բանականության, գիտակցության արդյունք են, ուստի նա առաջ է քաշում սեփական տեսությունը, որի համաձայն՝ երկու մակարդակ, հարթություն է առաջարկում՝ վերին և ստորին: Վերին հարթության վրա է գտնվում մարդու գիտակցությունը, որը բաղկացած է «գիտակցական մտքից», իսկ ստորին՝ զգայական մակարդակում, գտնվում է անգիտակցականը, այսինքն՝ «արյան գիտակցությունը»:

- ✓ Զգայական մակարդակում գտնվող բնազդների միջոցով Լուրբենսի պատմվածքների հերոսները դառնում են ավելի ազատ և սկսում են հետևել իրենց բնական ցանկություններին, որոնցից մեկը կենսահարաբերվելու ցանկությունն է: Լուրբենսը մեծ ուշադրություն է դարձրել «արյան գիտակցությամբ» կենսահարաբերմանը: Ինչպես և Ֆրոյդը, նա չի վախեցել բարձրաձայնել այդ թեման: Սակայն նրա և Ֆրոյդի՝ կենսահարաբերության վերաբերյալ գաղափարներն ամբողջովին տարբերվում են միմյանցից:
- ✓ Լուրբենսը կենսահարաբերությունը բնութագրում է որպես «երկու արյան միաձուլում», ինչը հրաշալիորեն պատկերված է իր արձակում: Այն այնքան բնական է, որքան ֆիզիոլոգիական մյուս պահանջմունքները, իսկ Ֆրոյդը կենսահարաբերումը դիտում է որպես անոթային գործընթաց, որի ցանկությունը պետք է ճնշվի գիտակցության կողմից: Ըստ Ֆրոյդի՝ այդ ցանկությունն առաջանում է մտքում, իսկ Լուրբենսի համար մերձենալիս մարդու գիտակցությանը փոխարինելու է գալիս մեկ այլ գիտակցություն՝ «արյան գիտակցությունը», որը ոչ մի կապ չի կարող ունենալ գիտակցության, մտքի, բանականության հետ: Կենսահարաբերվելը Լուրբենսի պատմվածքներում տղամարդուն և կնոջը միաձուլում է ողջ տիեզերքին, և նրանք դառնում են մեկ ամբողջություն: Այն զգացմունքներն արտահայտելու ամենալավ միջոցն է:
- ✓ Նա իր ստեղծագործություններում տարանջատում է այն կենսահարաբերությունը, որը կատարվում է զուտ պահի ազդեցության ներքո, կամ որը պարզապես ամուսնական պարտականություն է, այն ինտիմ հարաբերություններից, որոնց հիմքում ընկած է անսահման սերը, ցանկությունը, կիրքը: Նման կենսահարաբերությունը Լուրբենսն իր պատմվածքներում համեմատում է արևի շողերի հետ, որոնք ջերմացնում են մարդկանց մարմինը և հաճելի զգացումներ պարգևում: Իրական կիրք, սեր զգալով՝ Լուրբենսի հերոսները հեռանում են իրենց ընտանիքից («Կույսն ու Գնչուն» պատմվածքում քահանայի կինը հանուն սիրո լքում է իր մանկահասակ երեխաներին), դավաճանում են իրենց կողակցին («Կույսն ու Գնչուն» պատմվածքում, գնչուն, ընտանիք ունենալով, միմիայն մտածում է Իվեթին տիրանալու մասին) ապօրինի երեխա են ունենում («Կունք»

պատմվածքում էմմայի երեխան ոչ երկարատև, սակայն ուժգին սիրո պտուղ է):

- ✓ Դ.Հ. Լուրենսը իր պատմվածքներում մեծ ուշադրություն է դարձնում տիեզերական տարրերին՝ մասնավորապես արևին և լուսնին, որոնք, իր կարծիքով, լուրջ ներգործություն են ունենում մարդու էության վրա՝ նրա մեջ արթնացնելով բնական ազդակներ, կիրք, սիրելու և սիրված լինելու ցանկություն: Առաջ քաշելով «տիեզերական գիտակցություն» հասկացությունը, որն «արյան գիտակցություն» տեսության մի մասն է, իր արձակում նա ընթերցողին է ներկայացնում մարդ-տիեզերք կապի նոր մոտեցում, ինչը հրաշալիորեն արտացոլվում է «Արև», «Ջատիկ» և «Մրմունջ» պատմվածքներում: Տիեզերական մարմինների մասին գիտելիքներ Լուրենսը ձեռք է բերել Թոմաս Հարդիի՝ կին-տղամարդ հարաբերությունների և տիեզերական մարմինների նկարագրության արդյունքում: Լուրենսի «տիեզերական գիտակցության» ձևավորմանը նպաստել են նաև արևելքի պատմությունները, մասնավորապես՝ Ֆրոբենիուսի «Աֆրիկայի ձայնը», Բլավատսկայայի «Իզիդի բացահայտում» և «Գաղտնի ուսմունք» գրքերը: Հին ժողովուրդների առասպելաբանությունը մեծ ազդեցություն է ունեցել Լուրենսի՝ արևի և լուսնի սեռային տարանջատման գործում, իսկ Յունգի արքետիպերը, որոնք առաջանում են անգիտակցականի մակարդակում, նրան հնարավորություն են տվել ավելի շատ գիտելիք ձեռք բերել սիմվոլների մասին:
- ✓ Անհատ/գույգ/հասարակություն մոդելի միջոցով Լուրենսը փորձում է իր հերոսների մեջ անհատական գիտակցություն ձևավորել, որպեսզի նրանք կարողանան ազատվել հասարակության ճնշող կարծիքից և ազատություն ձեռք բերել: Հասարակական գիտակցությունը բնորոշ է այն մարդկանց, որոնք իրենց կյանքը չեն պատկերացնում առանց հասարակության, նրա կողմից ձևավորված կարծրատիպերի: Այս ամենի մասին իր հայացքները նա շարադրում է «Անհատական գիտակցություն/հասարակական գիտակցություն» էսսեում: Իր մոդելում գույգը գտնվում է անհատի և հասարակության միջև, որպեսզի նախ և առաջ հավասարակշռություն պահպանվի այդ երկուսի միջև, և որպեսզի սեռական բնագոյր կարողանա ազատորեն և բնականորեն դրսևորվել: Լուրենսի անհատ/գույգ/հասարակություն մոդելը պատկերված է «Արև», «Կինը, որը հեռացավ», «Մարդը, որը մահացավ», «Տղամարդը, որը սիրում էր կղզիները», «Արքայադուստր», «Մրմունջ», «Կույսն ու Գնչուն», «Սուրբ Մավր» պատմվածքներում:
- ✓ Լուրենսը հստակորեն տարանջատում է բնազդը բանականությունից: Բանականությունը սահմանափակում է մարդու ազատությունը, իսկ բնական ազդակները նրան տալիս են կյանքն ամբողջովին վայելելու հնարավորություն: Բնազդներով, ինտուիցիայով, կրքով, ցանկությամբ առաջնորդվող մարդկանց կենսակերպը Լուրենսն առաջին անգամ

նկարագրում է «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» ամենաքննարկվող վեպում, ինչը հնարավորություն է տալիս գործնականում տեսնել, հասկանալ տղամարդու և կնոջ բարդ փոխհարաբերությունները, «բնական մարդու» ցանկությունները: Այս վեպը հիմք է դառնում հետագայում պատկերելու «բնական մարդու» վարքագիծը նաև իր փոքր արձակում՝ «Հիվանդ հանքափորը», «Արև», «Կինը, որը հեռացավ», «Մարդը, որը մահացավ», «Տղամարդը, որը սիրում էր կղզիները», «Արքայադուստր», «Մրմունջ», «Կույսն ու Գնչուն», «Սուրբ Մավր», «Դալիան և պարոն Բիրքամշոն» պատմվածքներում, որոնցում «բնական մարդու» կերպարն անընդունելի և անգամ վայրի է թվում ժամանակակից հասարակությանը:

### **Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ**

1. Բնագրի և բանականության հակադրությունը՝ ըստ Դ.Հ. Լորենսի // Լեզուն և գրականությունը գիտական իմացության հարացույցում, «Լուսակն» հրատարակչություն, Երևան 2015, N 6, էջ 158-164:
2. Տիեզերական մարմինների ազդեցությունը մարդու էության վրա Դ.Հ. Լորենսի փոքր արձակում //Գրականության արդի հիմնախնդիրներ, Երևան, Լինգվա, 2015, Պրակ 2, էջ 39-43:
3. Դ.Հ. Լորենսի «արյան գիտակցության» ըմբռնումը // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, «ԵՊՀ» հրատարակչություն, Երևան 2015, N 2(19), էջ189-195:
4. Անհատական և հասարակական գիտակցության խնդիրը Դ.Հ. Լորենսի փոքր արձակում // Կանթեղ, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան 2017, N 1(70) էջ 15-21:
5. «Բնական մարդ» հայեցակարգը՝ ըստ Դ.Հ. Լորենսի // Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2017, N 1(649) հունվար-ապրիլ, էջ 191-195:
6. Լորենսի գաղափարները կենսահարաբերության շուրջ // Լեզուն և գրականությունը գիտական իմացության հարացույցում, «Լուսակն» հրատարակչություն, Երևան 2017, N 8, էջ 214-219:
7. Դ.Հ. Լորենսի «արյան գիտակցության» տեսության գեղարվեստական դրսևորումները // Կրթությունը և գիտությունը Արցախում, «ԱՍՈՂԻԿ» հրատարակչություն, Երևան 2017, N 1-2 հունվար-հուլիս, էջ 8:

**Виолета Викторовна Оганнисян**  
**Естественный человек в прозе Д.Г. Лоуренса**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07- “Зарубежная литература”.

Защита состоится 22 декабря 2017 г., в 12:30, на заседании специализированного совета Литературоведение 003 Института литературы имени М. Абегамяна НАН РА, по адресу: ул. Григора Лусаворича 15, г. Ереван, 0002, Республика Армения.

**РЕЗЮМЕ**

Данная диссертация посвящена исследованию прозы известного английского писателя XX века Д.Г. Лоуренса, в частности, исследованию «естественного человека» в его прозе. Анализ основывается на рассказах Лоуренса, а также на теории бессознательного, которую Лоуренс назвал «сознанием крови».

В диссертации дается анализ концепции Лоуренса «естественный человек», а также обосновывается термин «сознание крови», борьбу между сознанием и бессознательным, инстинктом и разумом в жизни своих героев, влияние космоса, в частности солнца и луны, на физический и внутренний мир героев Лоуренса.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка литературы. Объем работы составляет 162 страниц.

Основной методологии диссертации являются методы индукции и дедукции, широко распространенные в науке.

Во введении кратко представлена эпоха, а также политические, социально-экономические события, которые в значительной степени повлияли на мышление писателя и позже отразились на его произведениях. Указаны цели, задачи и методы, выделена научная новизна материала, обоснована актуальность предмета диссертации.

Первая глава («Проявление теории Лоуренса «сознание крови» в художественной системе писателя») проследживает формирование концепции «сознание крови» у Д.Г. Лоуренса. Здесь разъясняется почему Лоуренс выбирает термин «сознания крови» для своей теории. В этой главе показаны какие писатели, философы повлияли на формирование идей, отраженных в рассказах писателя, а также в виде таблиц представлены основные противоречия между инстинктом и разумом в рассказах писателя, которые играют важную роль в понимании теории Лоуренса.

Во второй главе («Проблема индивидуального и общественного сознания в рассказах Лоуренса 1925-30 г-ов») анализируются идеи Лоуренса о личном и общественном сознании, делается попытка обнаружения причин, которые заставляют героев Лоуренса, с одной стороны, самоизолироваться, отличить собственное "я" от общественного сознания, как единственный способ самопознания, с другой стороны, поиска своей пары, чтобы сексуальный инстинкт был проявлен свободно и естественным образом. Модель индивидуум - пара - общество представлена здесь в виде таблицы. В этой главе рассматриваются идеи Лоуренса об интимных отношениях, отличающиеся от идей Фрейда об интимных отношениях.

Предметом исследования третьей главы («Отражение связи человека и космоса в рассказах и эссе Лоуренса») являются рассказы и эссе Лоуренса на основе

«космического сознания» писателя, которое Лоуренс унаследовал от Томаса Харди, китайской философии, буддизма и мифологии отдельных народов. Здесь отражено представление Лоуренса о силе и великодушии «отца-солнце», что, безусловно, связано с «космическим сознанием» американских индейцев, а также представлена связь между героями писателя с таинственной луной.

В результате исследования доводов в работе, мы пришли к следующему умозаключению:

- ✓ «Сознание крови» - это теория Д.Г. Лоуренса, на основе которой автор пытается создать в своих рассказах «естественного человека». Согласно этой теории, помимо человеческого сознания, существует другое сознание, полностью независимое от системы мозга. Впервые Лоуренс пишет об этой теории в эссе «Психоанализ и бессознательное» и «Бессознательное воображение», где обосновывается, что руководство «сознанием крови» дает человеку свободу. В произведениях Лоуренса руководство «сознанием крови» для героев подразумевает следовать инстинктам, желаниям, интуиции, находящимся под давлением социальных норм и христианства.
- ✓ Научные взгляды Гегеля, Шопенхауера, Дарвина, Спенсера, Хаксли и Ницше способствовали формированию в рассказах Лоуренса концепции «естественный человек». Кроме того, антропологические и загадочные исследования Дж. Фрэнзера на формирование теории Лоуренса оказали значительное влияние.
- ✓ Теория «сознания крови» Лоуренса о бессознательном во многом основана на идее З. Фрейда о бессознательном. Но для Лоуренса бессознательное выходит за пределы сознания, в отличие от Фрейда, который не считает бессознательное отделенным от сознания, а неотъемлемой его частью. Лоуренс отделяет разум и сознание от инстинкта и «сознания крови», а Фрейд разделяет разум на две части - сознательный разум и бессознательный разум. Последнее включает в себя все умственные процессы, о которых люди не знают. Лоуренс исключает эту идею. Все процессы, происходящие в уме, являются результатом разума, сознания, и поэтому он выдвигает свою теорию, согласно которой есть два уровня - верхний и нижний. В верхнем уровне находится человеческое сознание, состоящее из «сознательного разума», а на нижнем уровне находится бессознательное, то есть «сознание крови».
- ✓ На нижнем уровне герои Лоуренса становятся более свободными и начинают следовать своим естественным желаниям, одним из которых и есть интимные желания. В своих рассказах Лоуренс уделяет большое внимание интимным отношениям. Как Фрейд, он не боялся озвучить эту тему. Но его идеи и идеи Фрейда об интимных отношениях полностью отличаются друг от друга.
- ✓ Лоуренс описывает интимные отношения как «слияние двух кровей», что прекрасно иллюстрируется в его прозе. Это также естественно, как и другие физиологические потребности, а Фрейд рассматривает интимные отношения как позорный процесс, желание которого должно быть подавлено сознанием. Согласно Фрейду, это желание возникает в уме, а, Лоуренс считает, что при этих отношениях сознание человеческого ума заменяется другим сознанием, «сознанием крови», которое не может иметь

ничего общего с сознанием, мыслью, интеллектом. Во время интимных отношений в рассказах Лоуренса мужчина и женщина сливаются с вселенной, и они становятся одним целым. Это лучший способ выразить чувства.

✓ Лоуренс в своих рассказах уделяет большое внимание космическим элементам, особенно солнцу и луне, которые, по его мнению, оказывают серьезное влияние на природу человека, пробуждая желание естественных сигналов, страсти, любви. Он отделяет отношения, которые происходят под влиянием момента от интимных отношений, основанных на бесконечной любви, желании, страсти. Такие отношения в прозе Лоуренса сравниваются с солнечным лучом, который согревает тело людей и приносит приятные чувства.

✓ Лоуренс пытается создать у своих героев личное сознание, чтобы они могли избавиться от угнетающего мнения общества и обрести свободу. Общественное сознание характерно для тех, кто не представляет жизнь без стереотипов, сформированных обществом. Он выражает свои взгляды об этом в эссе «Индивидуальное сознание / социальное сознание».

**Violeta Hovhannisyan**  
**The Natural Man in D.H. Lawrence's Short Stories**

Dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences, in the specialty of "Foreign Literature" (Specialty Code 10.01.07).

The defense of the dissertation is scheduled for 22 December, 2017, at 12:30 at the meeting of the Specialized Council of Literary Criticism N003 at the Institute of Literature after M. Abeghyan, NAS RA. Address: 15 Grigor Lusavorich str., 0002, Yerevan, Republic of Armenia.

**SUMMARY**

The dissertation is devoted to the study of the prose of D.H. Lawrence, one of the greatest English writer's of the 20th-century, in particular, to dissolving the "natural man" in his prose. The analysis is based on Lawrence's short stories, as well as on his own theory on unconsciousness, which Lawrence calls "blood-consciousness".

In the dissertation an analysis is given of what Lawrence means by the concept of "natural man", how he creates this image, why he chooses the term "blood-consciousness" for his theory. It represents the struggle between consciousness and unconscious, instinct and reason in the lives of his heroes, the influence of the cosmic elements, in particular, the sun and moon, on the physical and inner world of Lawrence's heroes.

The dissertation consists of an introduction, three chapters, and the bibliography. The volume of the dissertation is 162 pages.

The introduction briefly presents the era, as well as political, socio-economic events that largely have influenced the writer's thinking and later have been reflected on his works. The goals, tasks and methods are indicated, the scientific novelty of the material is singled out, and the relevance of the subject of the dissertation is grounded.

The first chapter ("The Manifestation of Lawrence's Theory on Blood-Consciousness in the Writer's Artistic System") traces the formation of the concept of "blood-consciousness". Here it is explained why Lawrence chooses the term "blood-consciousness" for his theory. This chapter shows which writers and philosophers have influenced the formation of ideas that have been reflected in the writer's short stories and in the form of tables, it also presents the main contradictions between instinct and reason in the writer's short stories that play an important role in understanding Lawrence's theory.

In the second chapter ("The Problem of the Individual and Social Consciousness in Lawrence's 1925-30 Short Stories"), Lawrence's ideas on individual and social consciousness are analyzed. An attempt is made to find the reasons that make Lawrence's heroes, on the one hand be isolated from the society as the main means of self-awareness, on the other hand, search for a couple, so that the sexual instinct is manifested freely and naturally. The model of individual – couple - society is presented here in the form of a table. This chapter discusses Lawrence's idea of intimate relationships, which differs from Freud's ideas on sex.

The subject of the study of the third chapter ("Reflection of the Connection between Man and the Cosmos in Lawrence's Short Stories and Essays") are Lawrence's short stories and essays based on the writer's "cosmic consciousness", which Lawrence has inherited from Thomas Hardy, Chinese philosophy, Buddhism and the mythology of different peoples. This chapter reflects the representation of Lawrence about the power and generosity of "father -

sun", which, of course, is connected with the "cosmic consciousness" of the American Indians. Here the connection between the heroes of the writer and the mysterious moon is presented.

Considering the arguments presented in the work, we have arrived at the following conclusions:

- ✓ "Blood-consciousness" is D.H. Lawrence's own theory, on the basis of which the author tries to create the "natural man" in his short stories. According to this theory, in addition to human consciousness, there is another consciousness completely independent of the human brain system. For the first time Lawrence writes about this theory in the essays' 'Fantasia of the Unconscious' and "Psychoanalysis and the Unconscious", where it is justified that the "blood-consciousness" gives man freedom. For Lawrence's heroes to be guided by the "blood-consciousness" means to follow instincts, desires, intuition, that is under the pressure of social norms and Christianity.
- ✓ The scientific views of Hegel, Schopenhauer, Darwin, Spencer, Huxley and Nietzsche have contributed to the formation of the concept of the "natural man" in Lawrence's short stories. In addition, J. Fraser's anthropological and mysterious studies have had a significant impact on Lawrence's theory.
- ✓ Lawrence's theory on "blood-consciousness" is largely based on the idea of Freud on the unconscious. But for Lawrence, the unconscious goes beyond consciousness, unlike Freud, who does not consider the unconscious to be separated from consciousness, but an integral part of it. Lawrence separates mind and consciousness from instinct and "blood-consciousness", and Freud divides mind into two parts - the conscious mind and the unconscious mind. The latter includes all mental processes that people do not know about. Lawrence excludes mind. All processes occurring in mind are the result of reason, consciousness, and therefore he puts forward his theory, according to which there are two levels - the upper and the lower. The human consciousness, that is, the "conscious mind" is on the upper level, and the unconscious that is, the "blood-consciousness" is on the lower level.
- ✓ On the lower level, Lawrence's heroes become freer and begin to follow their natural desires, one of which is the sexual desire. In his short stories, Lawrence pays much attention to intimate relationships. Like Freud, he is not afraid to voice this topic. But his ideas and Freud's ideas on intimate relationships are completely different from each other.
- ✓ Lawrence describes intimate relationships as "fusions of two bloods," which is perfectly illustrated in his prose. These relationships are as natural as the other physiological needs. Freud regards an intimate relation as a shameful process, the desire of which must be suppressed by consciousness. According to Freud, this desire arises in mind. Lawrence believes that during intimate relationships the consciousness of men is replaced by another consciousness – the "blood-consciousness," which cannot have anything in common with consciousness, mind and intellect. In Lawrence's short stories men and women merge with the universe during this relationship. This is the best way to express feelings.
- ✓ In his short stories Lawrence pays great attention to cosmic elements, especially the sun and the moon, which in his opinion have a serious impact on the nature of man, awakening the desire for natural impulses, passion and love.

He separates relationships that occur under the influence of the moment from intimate relationships based on infinite love, desire, passion. Such relationships in Lawrence's works are compared with a sunbeam that warms the body of people and gives pleasant feelings.

- ✓ Lawrence tries to create personal consciousness among his heroes so that they can get rid of the oppressive opinion of the society and gain freedom. Social consciousness is typical for those who do not imagine life without stereotypes formed by the society. The writer expresses his views on this in the essay "Individual Consciousness / Social Consciousness".